

13357

Apparatus th.

Unerfüllig

Zusammensetzung

Wistheis

891.99

v - 33

Dispaly 1899

~~1505~~  
1385  

---

10993

2003

891.99  
5-33

# ՀԱՅՈՍԴԻ ՓԻԼԻ

(ՀԵՔԻՇՎԹ)

100 / 16469-58  
951

ԳՐԵՑ ՏԱՐԱՆ  
ԳՈՅ. ՄԱՏԻՆԵԱՆՑ

ԵՐԿՐՈՒԹ ՄԱՂԱԳՐԱՆՁԻՒՆ



ԹԻՖԼԻՍ

Տիպ. Մ. Վարդանյանց, Վելյամին. սլ. № 7.  
Տպարան Մովսէս Վարդանեանցի.

1899.

Доз. Цензурою. Тифлисъ, 7-го Мая 1898 г.



# ՀՅԱՍՏԱԳԻՒԹԻՒՆ

(ՀԵՔԻԱԹ)

I.

2003

Հին ժամանակներում գիւղական մէկ հին տնակում ապրում էր մի զբառը այրի կին իւր միակ տասներկու տարեկան գուստը չամասփիւռի հետ։ Այրի կինը իւր ամուսնու մահից յետոյ ստիպուած էր ամեն նեղութիւններ քաշել իրանց ապրուստի համար։ Նա զնում էր դրացի գիւղացիների մօտ և օգնում էր նրանց տնային գործերում։ Դիւղացիները տեսնելով խեղճ այրի կնոջ դրութիւնը և նրա հաւատարիմ ծառայութիւնը, վարձատրում էին նրան իրանց ունեցած գիւղական արդիւնքներից։



Նրա աշխատելու աւելի ծանր օրերը լինում  
էին ամառուայ և աշնան եղանակներին,  
երբ ունեող գիւղացու գործերը աւելի շատ  
էին լինում, քան թէ տարուայ միւս եղա-  
նակներին: Ահա այսպիսի ամիսներում խեղճ  
այրին կարողանում էր ոչ թէ միայն իր  
օրական ապրուստը ձեռք բերել, այլ և  
ձմեռուան համար ապրուստի պաշար էր  
պատրաստում: Համասփիւսն էլ տանը ան-  
գործ չէր մնում, նա՝ իր մօր նման աշխա-  
տասէր լինելով՝ իրանց տանը աշխատում  
էր, երեսն բուրդ էր լուանում, քըրըում  
էր, թել էր մանում և գուղպաներ գործում:  
Նա իր մօր բացակայութեան ժամանակ  
աշխատում էր նրա պատուէրները ճշտու-  
թեամբ կատարել: Առաւօտները նրա առա-  
ջին գործը լինում էր գիւղի աղբիւրից ջուր  
բերելը, տան և սրահի աւելելը. նա մին-  
չև երեկոյ աշխատում էր. պատահում էր,  
որ չամասփիւռը ջրի համար աղբիւր զնա-  
լիս կամ վերադառնալիս՝ ճանապարհին  
փայտի մանը կտորներ էր դտնում, որ իր  
գողնոցի մէջ ժողովելով, բերում էր տուն  
եւ իրանց սրահի մի անկիւնում դիզում

ձմեռուայ համար: Նա այս բոլորը անում  
էր առանց ձանձրանալու, մանաւանդ՝ երբ  
տեսնում էր իր մօր կրած չարչարանքը՝  
ամբողջ օրը դրացի գիւղացիների տանը  
արած ժանր աշխատութիւնները. և երբ  
երեկոները տուն էր վերադառնում, յոգնա-  
ծութիւնից հազիւ թէ շունչ էր քաշում:  
Եւ ահա այսպիսով մայրը և աղջիկը տա-  
րուայ այս եղանակներին շարունակ աշխա-  
տութեան մէջն էին և այնքան պաշարեղէն  
էին ձեռք բերում, որ իրանց բաւականաց-  
նում էր:

Աշնան սկզբներում մէկ օր չամասփիւ-  
ռի մայրը դրացի գիւղացու տունը զնաց  
հաց թխելու և երբ ճաշի ժամանակը մօ-  
տեցաւ, մայրը տուն եկաւ և բերեց մէկ  
հաց և մի կտոր պանիր, որ նա ստացել  
էր դրացի գիւղացուց: Նա գիտէր, որ իր  
տանը հաց չկար ուտելու, և չամասփիւռը  
մինչև երեկոյ ահօթի պիտի մնար. բերած  
հացից և պահերից մի փոքր մասը տուեց  
չամասփիւռին ուտելու, իսկ մնացածը պա-  
տուիրեց, որ ընթըրիքի համար պահի և  
զգոյց կենայ, որ հացը գող կատուի ճանկը

չընկնիւ Եւ ապա գնաց կրկին աշխատելու, յանկարծ չամասփիւռը տեսաւ մի ծեր մուրացկան, որը՝ դառն արտասուր թափելով՝ չամասփիւռից ուտելիք էր ինդրում: չամասփիւռը տեսնելով նրա արտասուրը, սիրտը սկսեց մորմօքալ. ծերունու նիհար դէմքից, բոբիկ ոտներից և ցնցոտի հաղուստից երեսում էր, որ նա օտար տեղից մի ճանապարհորդ է: չամասփիւռը վազեց և իսկոյն բերեց իրանց համար պահած հացի և պանրի կտորները տուեց մուրացկանին: Սա օրհնեց փոքրիկ աղջկան և անհետացաւ: Նրա գնալուց յիտոյ չամասփիւռը ուրախ նստեց սրահի առաջ և սկսեց գուլպայ դործել: Նրա մանկական սիրտը ուրախութիւնով լիբն էր այն պատճառով, որ ինքը իր չքաւոր տեղովը աւելի չքաւորին կերակրեց և նրանից օրհնութիւն ստացաւ:

Երբ նա այս ուրախութեան մէջն էր, յանկարծ յիշեց հացի ու պանըի համար իր մօր տուած պատուէրը. արդէն նրա գալու ժամանակն էլ մօտենում էր: չամասփիւռը սկսեց մտածել թէ իր մօրը հաց ու պանրի համար ինչ առէ: նա չէր ուզում իր

արած ողորմութիւնը ո՛չ մօրը յայտնել և ոչ դրացիներին, իսկ մայրը պիտի կարծէր թէ չամասփիւռի անզգուշութիւնից հաց ու պանիրը գող կատուի բաժին են դարձել, որի համար նա նախատինք և յանդիմանութիւն պիտի ստանար իր մօրից: նա իր մտքի մէջ ասում էր թէ «ինչ ասեմ իմ մօրը և կամ ինչով նրան կերակրեմ երեկոյեան»: Այս յիշելով, նա յանկարծ՝ մտածմունքի մէջ ընկաւ և սկսեց տխրել. գուլպան ձեռից վայը ձգեց գետնին և լարվ հեռացաւ տնից, դրացիներն անդամ շիմացան, թէ նա ուր փախաւ: չամասփիւռը դիմելով անտառ՝ աշխատում էր մի միջոց գտնել, որ մուրացկանի տարած հաց ու պանըի փոխարէնը ձեռք բերի և դրանով իր ծածուկ արած ողորմութիւնը ծածկի: Խեղճ աղջիկը շուարած էր մնացել վազվը զում էր անտառի մէջ այս և այն կողմերը, կարծելով թէ իրան կ'օգնեն եղներ արածացնող գիւղացի տղաները, բայց ի գուր . . . նա այնպէս գլուխը կորցրել էր, որ իրան ծանօթ անտառից անցել էր մի այլ հեռաւոր ու անծանօթ անտառ: նա աւելի

շփոթուեց, երբ ճանապարհի հետքերը կողցրեց. արդէն երեկոյ էր և նա մոլորուած մնացել էր անտառի խորքում: Նա վճռեց, որ ամեն բան պատմէ իր մօրը, նմէ միայն անծանօթ անտառից դուրս գալու հնարք զտնի և իր մօր գնալուց առաջ տուն հասնի: Յանկարծ նրա աշքին մի բլրակի վրայ կառուցած հոյակապ պալատ երեաց՝ ընդարձակ պարսպով շրջապատած, որին կից կար նաև մի պարտէզ, իսկ պարտէզից դուրս գտնվում էր մի աղբիւր, որի ջուրը թափուում էր պարտէզի համար շինած քարէ աւագանը: Անտառի մէջ եղած պալատը պատկանում էր նոյն երկրի իշխանին, որն որսի գնալիս՝ հանգստանալու համար շինել էր տուել: Համասփիւրին այդ յայտնի չէր, նա վախով ծածուկ մօտեցաւ պալատի ետևի կողմը եղած պարսպին և կամաց կամաց մօտենալով պարտէզին՝ աղբիւրից մի քիչ հեռու նստեց հանգստանալու: Նա այժմ մի փոքր սիրտ առաւ, որ մի բարերար մարդ՝ իրան անտառից դուրս կըհանի և ցոյց կըտայ իրանց գիւղի ճանապարհը:

II.

Համասփիւրը այսպէս մտածելիս, նրա քունը տարաւ և խոր քնի մէջ մըտաւ: Այդ ժամանակ արեւ իր վերջին ճառագայթներն էլ երկրից հեռացրեց. մութը վրայ հասաւ, իսկ Համասփիւրը հանգիստ քնած էր պարտէզի մօտ, պարսպի տակը, քաղցը երազներով լցուած: Երազի մէջ մէկը միւսից յետոյ յայտնաւում են երեք ծեր, որոնցից առաջինը ասում է Համասփիւրին. «Մի վախենար, աղջիկս, ես քո պահապան հրեշտակն եմ, որ քեզ մինչև այստեղ հասցըի և անվտանգ պահպանեցի, իսկ այժմ քեզ բախտաւորացնելու ժամանակն հասել է, բարութեանդ համար քո ամեն մի մազը ուկէ թել կըդառնայ»: Երկ-

բորդ ծերունին էլ տալիս է Համասփիւռին իր օրհնութիւնը և ասում. «Քո աշխատափրութեան փոխարէն տալիս եմ իմ բարիքը, թող քո զգեստներդ ոսկէ թերթերի փոխունին»։ Երբորդ ծերունին Համասփիւռին այս օրհնութիւնը տուեց. «Ոորովհետև դուքս մօրդ միշտ հնազանդ աղջիկ ես եղել և նրա տուած խրատները միշտ լսել ես, զրա փոխարէն քեզ պարզեում եմ, որ քո մատներդ լցուեն զեղեցիկ գոհարեայ մատանիներով։ Համասփիւռը՝ երազի մէջ շատ ուրախացած՝ յանկարծ զարթեց և նայեց իր վրան և ինչ տեսաւ... ծերունիների խոստմունքները կատարուած... գլխի մազերը, մատանիները և ամբողջ զգեստը մի այնպիսի փայլմունք էին տալիս, ինչպէս արշալուսի ժամանակ արեի երեալը։ Առաւօտ էր, բայց դեռ ևս արել չէր ծագել։ Համասփիւռը զարմացած նայում էր իր վրայ, նա մնացել էր ապշած. և երբ սթափուեց, ուրախացաւ այդ բանից, բայց միենոյն ժամանակ մտածում էր, թէ ինչ հնազքով կարողանայ իրանց գիւղի ճանապարհը գտնել և անվտանգ տուն հասնել մօրը ուրախաց-

նելու։ Նա լսու գիտէր, որ մայրն ամբողջ գիշեր իր համար անհանդիսատ պիտի լինէր, և ցանկանում էր չուտով հասնել տուն։ Նա այս մտածմունքի մէջ էր, երբ յանկարծ պալատի պարսպի դռներից դուրս եկաւ իշխանի ախոռապետը զեղեցիկ հագնուած, մի խումբ ձիաններով և մի քանի այլ ծառաններով։ Նրանք ձիաններն աղբիւրն էին բերել ջուր տալու։ Համասփիւռը, որ այդ տարօրինակ զգեստներով մարդկանց տեսաւ, սարսափեց և երկիւղից մտաւ պարտէզի ցանկի մի բացուածքի մէջ եւ թագնուեց։ Այդ միջոցին նոր ծագող արևն իր առաջին ճառագայթը ձգեց Համասփիւռի վրայ եւ նրա զգեստներից առաջացրեց մի զօրեղ փայլ, որն և ընկնելով ջրով լի աւազանի մէջ՝ նոյն տեսակ փայլմունքներ առաջացրեց ջրի մակերեսոյթի վրայ։ Այս անսովոր փայլմունքներից ձիանները խրտնեցին և նրանցից ոչ մէկը չէր ուզում ջրին մօտենալ. ծառանները շատ աշխատեցին ձիաններին ջուր տալու և կամ լողացնելու, չըկարողացան։

Իշխանի ախոռապետը և ծառանները պարմացած նայում էին աւազանի ջրին և

չէին կարողանում դուշակել թէ ի՞նչ տեղից  
էին առաջացել այդ ջրային փայլմունքները։  
Նրանք կարծեցին թէ՝ սա մի հրաշք է,  
գնացին պալատը և պատմեցին իշխանին  
այդ բանը։ Քիչ ժամանակից յետոյ իշխանն  
իր որսկան չներով եկաւ աւազանի մօտ։  
Նա իսկոյն հրամայեց չներին, որ որս վրնտ-  
ընուր գնան։ Ըները պարտիզի չորս կողմը  
ցըուեցան նրանցից մէկը կանդ առաւ պար-  
տէզի ցանկի մօտ և, անդադար հաջելով  
թագնուած չամասփիւռի վրայ, իմաց ա-  
րաւ իշխանին իր զտած որսի մասին։ Իշ-  
խանը մօտեցաւ պարտէզի ցանկին և ի՞նչ  
տեսաւ... մի հրեշտակի նման փոքր աղջիկ,  
որի ոսկէթել մազերը, հրաշալի մատանինե-  
րը և ոսկէթերթ զգեստները զարմացրին  
իշխանին։ Նա մօտեցաւ նրան քաղցը դէմ-  
քով, իսկ չամասփիւռն երկիւղից լաց եղաւ։  
Իշխանը նոր հասկացաւ զրի մէջ փայլմունք-  
ներ երևալու պատճառը։ Իսկոյն քաղցրու-  
թեամբ հարցը չամասփիւռին, թէ նա  
ով է։ Խեղճ աղջիկը մի քիչ սիրտ առաւ և  
սկսեց պատմել իր գլխի անցքը։ Իշխանը  
երբ լսեց չամասփիւռի պատմածները,

վիշոք տուեց Աստծուն, և իբրև խնամմակալ  
հայր ասաց. «Աղջիկս, զնանք մեր պալատը,  
ես քեզ կը որդեգրեմ և դու բախտաւոր  
կապըն ինձ մօտ, ինչպէս իմ հարազատ  
զաւակ»։

Համասփիւռը, որ գեռ ևս յափշտակուած  
էր ծերունիներից ստացած օբհնութիւննե-  
րով և պարզեներով, ահա այժմ էլ սի այլ  
մեծ բախտի է արժանանում։ Նա հասկա-  
ցաւ, որ իշխանից իրան հեռանալ չեն թող-  
նում, ասաց. «Ես կըհամաձայնեմ, եթէ իմ  
տառապեալ մօրս էլ ինձ մօտ կապրեցնես։  
Ես առանց նրան չեմ կարող հանգիստ  
կեանք ունենալ, աւելի լաւ էր ինձ հայրա-  
կան երդեկիս տակ մօրս հետ ապղել, ես  
միշտ նրա կարօտը քաշում եմ և դիտեմ,  
թէ նա ինձ համար ինչ լացի և սպի մէջ  
կլինի»։

— Բարի է քո ոնեցած ցանկութիւնը,  
ասաց իշխանը, գնանք մեր պալատը, ես  
իմ մարդկանց կըհամայեմ, որ գնան զըտ-  
նեն քո մօրը և քեզ մօտ բերեն։

Այս ասելուց յետոյ իշխանն իր ծառա-  
ներին հրամայեց, որ որսի գնալու պատ-

ըստութիւն տեսնեն, իսկ ինքը չամաս-  
փիւռի ձեռքից բռնած՝ տարաւ նրան պա-  
լատը: Նա իսկոյն իր մունետիկին հրա-  
մայեց, որ երթայ անտառի շրջակայ դիւ-  
զերում յայտնէ չամասփիւռի մասին և երբ  
կըգանէ նրա մօրը, նոյն օրն և եթ բերէ  
իր պալատը: Դրանից յետոյ իշխանն որսի  
գնաց, իսկ չամասփիւռին թողեց պալա-  
տումը, որ սպասէ մունետիկի վերադառնա-  
լուն և առանց իրան ոչ մի տեղ շրգնայ,  
անդամ իր մօրն էլ շըյայտնուի: Այն օրուա-  
նից արդէն անցել էր երեք օր և դեռ ոչ  
իշխանն էր որսից վերադարձել և ոչ էլ  
իշխանի ուղարկած մունետիկը:

III.

 Երբորդ օրը մթնով պալատի սկարս-  
պի մեծ դռան մօտ մի գեղջկուհի  
է երեաց ցնցոտի շորերով և յայտնեց  
գոնապանին, որ ինքն եկել է իշխանի մօտ

իր ինդիրը բերանացի յայտնելու նրան,  
որովհետև իշխանն որսից գեռ ևս չէր վե-  
րադարձել, ուստի այդ բանը յայտնեցին  
չամասփիւռին: Նրա կարգադրութիւնով  
գեղջկուհին մնաց պալատում գտնուող ազա-  
խինների սենեակում մինչև իշխանի գալը:

Չամասփիւռն ուրախութիւն զգաց իր  
սրտի մէջ և ուզեց անպատճառ տեսնել նոր  
եկող գեղջկուհուն: Նա վայր իջաւ պալատի  
վերին յարկից, մտաւ աղախինների սենեա-  
կը և ում տեսաւ... իր սիրելի մօրը, որն  
եկել էր իշխանից օգնութիւն խնդրելու, իր  
միակ զստերը, որ կորցըել էր, գտնելու  
համար: Չամասփիւռն իսկոյն չը յայտնուեց  
իր մօրը, մի կողմը քաշուելով նա ծածուկ  
լաց եղաւ և իրան տուած պատուէրի հա-  
մաձայն վճռեց, որ մօրը շըյայտնուի մինչև  
իշխանի վերադարձը: Գեղջկուհին այնպէս էր  
շուարուել, որ իր հարազատ չամասփիւռին  
շընանաշեց, մանաւանդ որ նա տեսնում էր  
իր առաջ կանգնած թանկագին զգեստով  
զարդարուած մի աղջիկ: Չամասփիւռը  
փառք տուեց Աստղծուն, որ իր մօրը կա-  
րողացաւ տեսնել. նա աւելի ուրախ էր այն

պատճառով, որ մինչեւ իշխանի վերադառնալն ինքը հոգս կըտանի իր մօր հանգըստութեան համար: Նա պալատի սենեակից ծածուկ դիտում էր իր մօր ամեն շարժւածքները, մանաւանդ, երբ աղախիններից մէկը նրա համար ուտելիք էր տանում: Նա տեսնում էր թէ ինչպէս իր մայքը՝ իր ձեռքերը դէպի պալատի սենեակները բարձրացնելով՝ օրհնում էր իր բարերարուհուն: Համասփիւռը շատ էր տանջւում անյայտութեան մէջ մմալու համար. նա երբեմն մըտնում էր իրան ննջարանը, ծածուկ լաց էր լինում, Աստծուց խնդրում էր, որ իշխանը շուտ դայ պալատը և ինքն՝ իր մօքը յայտնուելով՝ նրա քաղցը համբոյըններին արժանանայ: Խեղճ կինը շըկարողանալով դիմանալ վշտին՝ հիւանդացաւ:

Սիցան օրեր. իշխանն որսից շըկերադարձաւ, մի կողմից Համասփիւռն էր հալում մաշտում և իր մօր ձայնի ու քաղցը համբոյըի կարօտը քաշում, միւս կողմից հիւանդ մայրն օրերն էր համարում և որքան էլ իշխանն ուշանում էր, այնքան էլ հիւանդը վատանում էր. նա ուտելիսմելու

( 1001 / 255 ) / 16469-58

ախորժակն էլ կորցրեց և ուժասպառ լինելով սենեակից զուրս գալ էլ շըկարողացաւ: Երբ Համասփիւռն իմացաւ իր մօր մերձիման լինելը, շըհամբերեց, նա զուրս ընկաւ պալատի սենեակներից, գնաց հիւանդի բնակարանը և ինչ տեսաւ... հիւանդը՝ իր վերջին ոյժը հաւաքած մի կողքի վրայ թեքուելով՝ աչքերը ձգել էր մեծ զռան կողմը և իշխանի գալուն էր սպասում: Համասփիւռը շը համբերեց և սկսեց բարձր ձայնով լալ և ասել. «Մայրիկ, ես քո Համասփիւռն եմ, Աստուած ինձ մեծ բախտի արժանացրեց, զու էլ ինձ հետ բախտաւոր պիտի ապրես իշխանի պալատի մէջ, որ ինչպէս դու՝ այնպէս էլ ես էի սպասում նրա գալուն, ես չէի ուզում առանց իշխանի գիտութեան քեզ յայտնուել, բայց երբ ծանըր հիւանդացար, էլ շըկարողացայ իշխանի գալուն համբերել. սիրտս այժմ մորմոքուում է, որ զու այդ գրութեան մէջ ես»: Հիւանդին շրջապատող աղախինները և Համասփիւռի նաժիշտը, երբ լսեցին Համասփիւռի ասածը, ապշած նայում էին երբեմն հիւանդի, երբեմն Համասփիւռի վրայ: Նրանք մի-


մեանց հետ խօսելով, զովում էին չամաս-  
փիւռի ունեցած համբերութիւնը իսկ մեր-  
ձիմահ հիւանդը խօսելու կարողաւթիւն շու-  
նենալով՝ միմիայն քաղցր հայեացքներով և  
համբոյրներով էր պատասխանում իր սիրելի  
աղջկան. նա նշանով աղջկանից ջուր խընդ-  
րեց և չամասփիւռն էլ բաժակով ջուր մօ-  
տեցրեց նրա բերանին. մի քիչ ժամանա-  
կից յետոյ իր մատներով սկսեց շփել իր  
մօր աչքերը և նկատեց, որ նրանք յաւի-  
տեան փակուեցան: Համասփիւռը շատ սղաց  
իր մօր վրայ և տեսնելով, որ իշխանն ու-  
շանում է, իր մօր թաղման համար հոգս  
տարաւ: Նրա ցանկութեան համաձայն՝ հան-  
գուցեալի համար զերեզման պատրաստեցին  
պարտէզից դուրս այն մասում, ուր որ ին-  
քը մի դիշեր քնել և երազի մէջ օրհնու-  
թիւններ ստանալով՝ բախտաւորուել էր,  
մօտակայ դիւզից քահանայ հրաւիրեցին և  
անշուք թաղեցին նրան:

Թաղման երրորդ օրն իշխանն որսից  
վերադառնաւ պալատ, նրան պատմեցին  
բոլորը, իսկ չամասփիւռը սէի շորերով  
ծունկ չոգեց իշխանի առաջ և լալով պատ-

մեց իր մօր գալու, հիւանդանալու և մա-  
հուան մասին. նա այն էլ յայտնեց, որ ին-  
քը սպասում էր նրա զալուն, որ նրա ներ-  
կայութեամբ յայտնուի իր տարաբախտ  
մօրը: Երբ իշխանը լսեց չամասփիւռի այդ  
խօսքերը, նրա ճակատը համբուրեց և ա-  
սաց. «Որովհետեւ դու քո երջանկութեան ու  
բախտաւորութեան օրերում չըմոռացար քո  
մօրը և նրան թաղել տուիր քո բախտաւո-  
րութեան տեղը, թո՞ղ այսուհետեւ քո տըրտ-  
մած սիրտը մի ուրիշ բախտաւորութիւնով  
սփոփուի. ես նշանում եմ քեզ իմ որդուս  
հետ և իմ կենդանութեան ժամանակ ձեզ  
եմ տալիս իմ կալուածքիս կէսը, թո՞ղ Աս-  
տուած օրհնէ այս նշանադրութիւնը»:

Այս ասելուց յետոյ իշխանը մարդիկ  
ուղարկեց իր հայրենի քաղաքը և կանչել  
տուեց իր միակ որդուն, և երբ նա եկաւ  
անտառի պալատը, իշխանը դուրս հանեց չա-  
մասփիւռին նրա առաջ, որի աջ ձեռքը տա-  
լով իր որդու աջ ձեռքին՝ օրհնեց երկուսին,  
տալով չամասփիւռին որդու մատանին, իսկ  
չամասփիւռի բախտաւոր մատանիներից  
մէկն էլ հազցրեց իր որդու մատին:

Միւս օրն և եթ իշխանը խնջոյք կազմեց, հրաւիրեալներին յայտնի եղաւ չամասփիւռի բարի համբաւը, և երբ երկու նոր նշանուածները կատարեալ հասակն առան, իշխանը նրանց պսակեց, և այնուհետև նոր ամուսնացող գոյգերը երջանիկ էին ապրում: Աստուած էլ օրհնեց նորապսակ գոյգերին և նրանք շատ դաւակների ծնող դարձան: Համասփիւռը իր մօր գերեղմանը շքեղ խաչարձանով զարդարել տուեց և ուխտեց իր սիրելի մօր յիշատակն անմահցնելու համար՝ իր համագիւղացիներին ձեռքից եկած ամեն օգնութիւն հասցնել:



604

2013

13351

